«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Խմբային հետազոտական աշխատանքների կազմակերպումը հնչյունափոխություն թեմայի դասավանդման ընթացքում

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց լեզու և գրականություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Մելիքյան Արշալույս Սերյոժայի

ՄԱՐԶ՝ Արարատ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Նոյակերտի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն

1. Հիմնական և ավագ դպրոցի չափորոշչով ուսուցչի առջև դրված խնդիրներն այդ ուղղությամբ

2. Բուն թեմայի մասին տեսական մի քանի բացատրություններ

3. Տվյալ թեմայի ուսուցման նպատակադրումների ներկայացում

4. Տվյալ թեմայի տեղը դպրոցի առարկայական ծրա՛րում

5. Բուն թեմայի գործնական ուսուցման կազմակերպման նկարագրություն

Եզրակացություն

Օգտագործված գրականության ցանկ

Ներածություն

Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի առարկան հայերենի հնչյունաբանության, ուղղագրության, ուղղախոսության, բառագիտության, քերականության, կետադրության և ոճագիտության ուսուցման ձևերն են:

Մայրենի լեզվի ուսուցումը բացառիկ նշանակություն ունի անհատի ու քաղաքացու բարոյական կերպարի և արժեքային համակարգի ձևավորման գործում, ուստի հայոց լեզվի դպրոցական դասընթացը, բուն լեզվական գիտելիքներ տալուց բացի, պետք է գաղափար մշակի ժողովրդի կյանքում և նրա ազգային նկարագրի ձևավորման գործում մայրենի լեզվի դերի վերաբերյալ:

Անհրաժեշտ տեղեկություններ պետք է տրվեն հայոց լեզվի բնույթի, նրա պատմական զարգացման փուլերի, գրական և բարբառային տարբերակների, աշխարհում հայոց լեզվի տարածվածության, հայերենի ուսումնասիրության պատմության, հայ և օտարազգի նշանավոր հայագետների, նրանց կողմից հայոց լեզվին և հայ գրականության •ոհարներին տրված գնահատականների մասին:

Նման նյութերը համամասնորեն և սովորողի կրթական մակարդակին համապատասխան պետք է տեղ գտնեն բոլոր դասարանների ուսումնական ծրագրերում: Ուսումնական նյութերի հատուկ ընտրությամբ պետք է նաև շեշտվի մայրենի լեզվի կարևոր դերը ազ•ապահպանության գործում, հայոց լեզուն բնորոշվի որպես հայ ազգային մշակույթի արտահայտության բարձրագույն ձևը:

Մայրենի լեզվի ուսուցումը նպաստելու է սովորողների մտքերի, զգացմունքների ու ապրումների արտահայտմանը, տվյալ իրադրության պահանջով և բազմազան ոճերի կիրառությամբ բանավոր ու գրավոր խոսք կազմելու հմտությանը, ստեղծագործական կարողությունների բացահայտմանն ու դրանց հետագա մշակմանը:

Այս առումով լեզվական նյութի ուսուցումը պետք է նպաստի կապակցված խոսք կազմելու հմտությունների 4 զարգացմանը, լեզվական յուրաքանչյուր միավոր ներկայացվի որպես խոսքի կառուցմանը մասնակցող բաղկացուցիչ տարր: Սրա հետ կապված՝ առաջին պլան են մղվում բառագիտությունը, բառային

իմաստաբանությունը և բառային ու քերականական ոճաբանությունը, հնչյունաբանությունը, ուշադրություն է դարձվում բառերի իմաստային, շարահյուսական ու ոճական կապակցելիությանը, խոսքի մեջ բառերի ճիշտ ընտրությանը, սովորողի գործուն բառապաշարի հարստացմանը

1. Հիմնական և ավագ դպրոցի չափորոշչով ուսուցչի առջև դրված խնդիրներն այդ ուղղությամբ

Խմբային ուսումնական գործընթացի կառուցվածքային հիմքում ընկած է ուսուցիչ-աշակերտական խումբ փոխազդեցության ձևը: Խմբի յուրաքանչյուր անդամ իր ուսումնական նպատակներն ու խնդիրներն իրա•ործում է մյուսների օ•նությամբ՝ միաժամանակ օգնելով մյուսներին իրագործել իրենց խնդիրներն ու նպատակները: Աշակերտների համագործակցությունը չի սահմանափակվում միայն համատեղ քննարկումներով: Աշակերտների միջև փոխազդեցությունը կազմակերպվում է փոխուսուցման, համատեղ ուսումնասիրությունների, փոխստուգման, փոխվարժանքի և այլ նմանատիպ նպատակներով:

Ուսուցման կազմակերպման խմբային եղանակի դեպքում ուսումնական խումբը կազմվում է միատարիք ու միամակարդակ անդամներից: Միևնույն ուսումնական խմբում կարող են ընդգրկվել միայն նրանք, ովքեր ընդհանուր ուսումնական ծրագրի միևնույն հատվածն են յուրացրել և որոնց մնացել է յուրացնել ընդհանուր ծրագրի մյուս, նույնպես միևնույն, հատվածը:

Հայոց լեզվի դասավանդման ժամանակ առարկայի բովանդակությունը, խնդիրներն ու նպատակները, նյութերի ընդգրկումն ու ծավալը որոշելիս հիմք պետք է ընդունել մայրենի լեզվի դերը ինչպես ժողովրդի և անհատի կյանքում, այնպես էլ միջնակարգ կրթության մյուս առարկաների համակարգում: Հայոց լեզվի ուսուցման նպատակը պետք է լինի սովորողի մեջ մշակել ժամանակակից գրական հայերենին համապատասխան խոսք կառուցելու, իր խոսքը վերահսկելու, բարբառային, ժարգոնային արտահայտություններից մաքրելու, մայրենի լեզվով ամենատարբեր բնույթի տեքստեր և գրականություն կարդալու և ինքնուրույն հասկանալու կարողություններ:

Հայոց լեզվի դպրոցական դասընթացը անհրաժեշտ և բավարար գիտելիքներ է տալիս լեզվական համակարգի բոլոր բաժինների վերաբերյալ: Ելնելով ուսուցման

նպատակադրումից ուսուցչի առջև խնդիր է դրվում հայոց լեզվի դասընթացը կառուցել գործնական բնույթի գիտելիքների, հմտությունների ու կարողությունների զարգացման միտումով զերծ մնալով դրան չնպաստող վերացական քերականական գծապատկերներից:

Խմբային հետազոտական աշխատանքների դեպքում ուսուցչի առջև դրվում են հետևյալ խնդիրները: Նախ անհրաժեշտ է ապահովել ՝հնչյունափոխություն՝ թեմայի հետ կապված բոլոր հասկացությունների ներառումը հետազոտական գործընթացի մեջ: Սույնից հետևում է, որ խմբի անդամների կողմից հետազոտության պետք է ենթարկվեն հետևյալ կետերը՝

- ուսումնասիրել հնչյունափոխության հասկացությունը, խմբերը,
- հնչյուփոխության պատճառները, հնչյունների բնույթը,
- մանրամասն ուսումնասիրության ենթարկել շեշտից կախված հնչյունափոխությունը:

Ենթադրվում է, որ խմբային հետազոտական աշխատանքների կատարումից հետո լուծված կհամարվեն ներքոնշյալ խնդիրները

- գրագիտության ուսուցում, անսխալ ու վարժ գրելու և կարդալու հմտությունների ձևավորում.
- աշակերտների բառապաշարի հարստացում, որը նպաստում է շրջապատող աշխարհի առարկաների ու երևույթների ճանաչմանը.
- հայոց լեզվի կառուցվածքի, լեզվական միավորների և նրանց միջև առկա հարաբերությունների մասին համակարգված գիտելիքների ուսուցում.
- լեզվաքերականական գիտելիքների հիման վրա խոսքի և նրա միավորների վերլուծության կարողությունների ձևավորում.
- ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողությունների մշակում, լեզվաքերականական գիտելիքները խոսքի կառուցման ընթացքում կիրառելու հմտության ձևավորում.
- կարդացածը պատմելու, քննարկելու, տարբեր թեմաներով զրույցներ անցկացնելու, երկխոսություններ կառուցելու միջոցով աշակերտների բանավոր խոսքի զարգացում.

1. Բուն թեմայի մասին տեսական մի քանի բացատրություններ

Հնչյունափոխությունը լեզվական այն իրողությունն է, երբ լեզվի պատմական տարբեր փուլերում միևնույն բառի մեջ լեզվական կամ արտալեզվական գործոնների հետևանքով տեղի է ունենում հնչյունների փոփոխություն:

Այս երևույթը բնորոշ է ինչպես ձայնավորներին, այնպես էլ բաղաձայններին, հնչյունափոխություն է կատարվում հնչյունների փոփոխության, երբեմն էլ նրանց սղման հետևանքով:

Հայերենում բազմաթիվ ու տարբեր են հնչյունափոխության պատճառները, այստեղ առավել կարևոր են շեշտի և նրա դիրքի հետ կապված փոփոխությունները, ինչպես նաև հնչյունների բնույթը, այսինքն, թե ինչ հնչյուններ ինչպիսի հնչյունների հետ են կապակցվում, ինչ կողմերով ու հատկանիշներով են նրանք առնչվում ու ընդհանրանում, ինչպիսի արտասանական դիրք ու եղանակ ունեն:

Քանի որ հնչյունափոխական դեպքերը պայմանավորված են տարբեր հանգամանքներով, ուստի և տարբեր են նաև նրանց դասակարգման սկզբունքներն ու մոտեցումները: Հայերենում տարբերակվում են հնչյունափոխության երեք խումբ՝ պատմական, դիրքային կամ շեշտից կախված և փոխազդեցական հնչյունափոխություն:

Պատմական կամ ընդհանուր հնչյունափոխություն են համարվում հնչյունական այն փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել լեզվի զարգացման տարբեր փուլերում և սահմանափակվում են ոչ թե մեկ կամ մի քանի օրինակներով և դեպքերով, այլ ընդգրկվում են նույն կամ նման բոլոր դեպքերը և դրանով էլ արտացոլում են լեզվի հնչյունական կազմի պատմական զարգացումը:

Դիրքային կամ շեշտից կախված են համարում այն հնչյունափոխությունը, որը պայմանավորված է հայերենի շեշտի դիրքով:

Փոխազդեցական հնչյունափոխությունն այն եղանակն է, երբ բառի մեջ հնչյուններից մեկն ազդում է իրենից առաջ կամ հետո ընկած որևէ հնչյունի վրա և

փոխում տվյալ հնչյունի ձայնային որակը կամ արտասանական տեղն ու եղանակը:

Առարկայական չափորոշչի և ծրագրերի համաձայն՝ նախատեսվում է հնչյունափոխության ուսումնասիրության ժամանակ ուշադրություն դարձնել նրա գործառական արժեքին, համապատասխան վարժությունների միջոցով ամրապնդել դրանց գործնական կիրառությունը խոսքում:

Հնչյունափոխության դասավանդումը իրականացվում է ընթերցանության համար նախատեսված տեքստերի միջոցով, այնուհետև սույնի յուրացումը և ամրապնդումը ապահովում է վարժանքը, գրավոր խոսքի տարբեր ձևերը, խմբային հետազոտական աշխատանքները:

Հնչյունափոխությունը ուսուցանվում է բացառապես գործնական-արտասանական վարժությունների միջոցով: Այս աշխատանքը կատարվում է տեքստերի ընթերցանությանը զուգահեռ:

Բաղաձայնների դիրքային հնչյունափոխության, ձայնավորների և հատկապես երկհնչյունների հնչյունափոխության ուսուցումը կատարվում է կոնկրետ օրինակներով՝ առանց կանոնների մեխանիկական սերտման:

«Հնչյունաբանություն» բաժինը ուսուցանելիս նպատակահարմար է օգտագործել չափածո ստեղծագործություններ, որոնց օրինակով կարելի է ցույց տալ հնչյունի գեղարվեստական-արտահայտչական արժեքը:

Ուսուցման ընթացքը կարևորվում է ոչ միայն միավորների կառուցվածքային, այլև ոճական նշանակությունների ընդգծմամբ:

Հնչյունափոխության դասավանդման ընթացքում կարևորվում է հոմանիշների, հականիշների, համանունների, հարանունների խոսքի պատկերավորման մեջ ունեցած դերը:

Այստեղ կարևորվում է հատկապես տեքստային աշխատանքը, տեքստի բառերի իմաստային կողմի քննությունը, տրված բնութագրերով որոշակի տեքստեր

կառուցելու հմտությունների զարգացումը, ակտիվ բառապաշարի հարստացումը զուգակցելով այն խմբակային հետազոտական աշխատանքներով:

1. Տվյալ թեմայի ուսուցման նպատակադրումների ներկայացում

Սովորողներին տրվող պարտադիր պահանջներն են՝ աշակերտների կողմից գիտելիքների, կարողությունների, հմտությունների յուրացումը, հաղորդակցվելու, համագործակցելու, ստեղծագործելու, ինքնուրույն աշխատելու զարգացումը: Յուրաքանչյուր հաջորդ մակարդակ հենվում է նախորդի վրա և յուրաքանչյուր հաջորդի յուրացումը վկայումէ սովորողների ավելի բարձր առաջադիմության մասին, որն էլ հնարավորություն է ընձեռում հետագա ուսումը կազմակերպելու:

Դպրոցն ավարտողը պիտի ունենա գիտելիքների հետևյալ համակարգը՝

- հայերենի հնչյունական համակարգը, հնչյունների դասակարգումը, ձայնավորների, բաղաձայնների, երկհնչյունների ուղղագրությունը,
- շեշտից կախված հնչյունափոխությունը, բառի հնչյունափոխված և անհնչյունափոխ ձևերը,
- բառերի հնչյունական կազմի ոճական նշանակությունը:

Ինչպես նաև, կարևորվում են հետևյալ կարողությունները ու հմտությունները՝

1. ճիշտ ընկալել լսած խոսքի հնչերանգային- արտահայտչական բնույթը և դրսևորել դրան համարժեք վերաբերմունք,
2. մասնակցել խոսակցությանը՝ ցույց տալով, որ հասկանում են ուրիշների մտքերը
3. խոսել՝ պահպանելով հայերենի ուղղախոսական կանոնները, ակտիվորեն մասնակցել երկխոսությանը և բանավեճին՝ հարցեր առաջադրելով,
4. կառուցել իրադրությանը համապատասխան խոսք, խոսքի տրամաբանությանը համարժեք հնչերանգ ձևավորել:

Հանրակրթական դպրոցում կարևոր է նաև հաղորդակցվելու, համագործակցելու, ստեղծագործելու, ինքնուրույն աշխատելու կարողությունների զարգացումը աշակերտի մոտ: Աշակերտը պետք է կարողանա լսել, հասկանալ: վերարտադրել հնչող խոսքը, բարձրաձայն անսխալ ընթերցել տեքստը, լուռ ընթերցել՝ կենտրոնանալով անծանոթ բառերի վրա:

Պետք է կարողանա մասնակցել խմբի գործունեությանը, պահպանել խմբային աշխատանքի կանոնները, զրույց սկսել խմբի անդամների հետ, իրավիճակին

համապատասխան ոչ ծավալուն բանավոր տեքստ կազմել, պատմություններ պատմելիս հանպատրաստից տեքստ հորինել:

Տվյալ թեմայի տեղը ավագ դպրոցի առարկայական ծրագրում

Ինչպես նշեցինք, լինելով կենդանի, հնչուն խոսքի բաղադրատարրերը՝ հնչյունները, վանկերը, շեշտը, անփոփոխ չեն մնում և լեզվի պատմական զարգացման ընթացքում փոփոխվում են՝ միմյանց վրա ազդելով կամ այլ պատճառներով: Այդ փոփոխությունների ուսումնասիրությամբ զբաղվում է հնչյունափոխությունը: Հնչյունափոխության դասավանդման ընթացքում դպրոցներում կազմակերպվում են խմբային հետազոտական աշխատանքներ, որտեղ կարևորվում է հնչյունափոխության ուսուցման նպատակն ու գործունեությունը: Ուսուցման նպատակն է՝

1. բանավոր խոսքում պահպանել հայերենի հնչյունների գրական ճիշտ արտասանությունը, բառերի ճիշտ շեշտադրությունն ու նախադասությունների հնչերանգը,
2. ըմբռնել շեշտի ուղղախոսական արժեքը, ճիշտ շեշտադրության կարևորությունը, հայեցի-անսխալ և արտահայտիչ կարդալ տեքստերը,
3. ընկալել հնչյունների ոճական արժեքը արձակ և չափածո ստեղծագործություններում ճիշտ առոգանություն պահպանելու համար,
4. տարբերակել բառային և տրամաբանական շեշտը, ըմբռնել շեշտից կախված հնչյունափոխության արժեքը, անսխալ գրել տեքստերը:

Այստեղ կարևոր է ուսուցչի դերը, ում շնորհիվ այս ամենը պիտի ըմբռնեն աշակերտները: Նյութը կամրապնդվի, երբ ուսուցիչը ծավալի ուսումնական •ործունեություն՝

1. պիտի կատարվեն արտասանական վարժություններ, շուտասելուկներ,
2. արձակ, չափածո ստեղծագործությունների բարձրաձայն ընթերցանություն, բանաստեղծությունների ան•իր արտասանություն, տեքստերի բանավոր վերարտադրություն,
3. երկխոսություններ, դերային վարժություններ,
4. ուղղագրական վարժություններ, ուսուցողական և ստուգողական թելադրություններ: Այս ամենը շատ կարևոր է խմբային հետազոտական աշխատանքներ կատարելիս:

1. Բուն թեմայի գործնական ուսուցման կազմակերպման նկարագրություն

Հետազոտական աշխատանքը իրականացվում է երեք փուլով՝ նախնական կամ նախապատրաստական փուլ՝ գործնական հմտությունների ձևավորում ինքնուրույն աշխատանք ձեռնարկելու համար, զարգացման կամ փորձարարական փուլ ինքնուրույն կերպով և սեփական փորձով գիտելիք ձեռք բերելու կարողության զարգացում, ավարտական փուլ՝ ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու կարողության դրսևորում:

Անհրաժեշտ պայմաններն են՝ աշակերտների ճանաչողական ակտիվությունը, որոնելու նախանձախնդրությունը, աշխատանքի արդյունքին հասնելու ձգտումը, ստեղծագործական անհատական նախասիրությունների դրսևորման և ազատ գործելու հնարավորությունը:

Հետազոտական աշխատանքը ենթադրում է հետևյալ քայլերը՝

- տեղեկատվության որոնում,
- կուտակված տեղեկատվության օգնությամբ հիմնահարցի լուծման ուղիների որոնում,
- որոնողական աշխատանքի արդյունքների ամփոփում և ձևակերպում,
- լսարանի առջև ելույթ ունենալու նախապատրաստություն,
- խմբային քննարկում:

Հետազոտական աշխատանք կատարող աշակերտների գործողությունները՝ կարդալ, ընտրել, խմբավորել, դասավորել և դասակարգել, համեմատել, մշակել, պլան կազմել, շարադրել բովանդակությունը, մեջբերումներ անել, վերարտադրել շարադրանքը լսարանի առջև, փաստերով հիմնավորել և ապացուցել իր ասածը, բանավիճել, քննարկել:

Խմբային հետազոտական աշխատանքի անհրաժեշտ պայմաններն են՝ ազատ հաղորդակցումն ու շփումը, դիմացինին լսելու, հասկանալու, մտածված պատասխան տալու կարողությունը, հանդուրժողականությունը, համա·որձակցությունը, իր և խմբի անդամների ուսումնառության, աշխատանքի և հաջողության համար պատասխանատվությունը:

Գործունեության ձևերն են՝ բարձրաձայն ընթերցանությունը, համատեղ տեքստային, բառային, հետազոտական և ստեղծա·որձական աշխատանքը, կապակցված խոսք կազմելը, միասին զրույցներ, բանավեճեր, քննարկումներ,

աուլիսներ, շնորհանդեսներ, բեմականացումներ, մրցույթներ նախապատրաստելը և իրականացնելը:

Ստորև ներկայացվում է գործնական օրինակ ՝Հնչյունափոխություն՝ թեմայի դասավանդման գործընթացից:

1. Բուն թեմայի •ործնական ուսուցման կազմակերպման նկարագրություն

Թեմա	Հնչյունափոխության խմբերը
Վերնագիրը	Պատմական հնչյունափոխություն
Նպատակը՝	Պատմական հնչյունափոխության էության բացահայտումը, սույնի առկայության ուսումնասիրումը ձայնավորների, բաղաձայնների, բարբառների, եռաբարբառների դեպքում
Աշխատանքի ձևը	խմբային հետազոտական աշխատանք
Դասի ընթացքը	դասի իմաստի ընկալման նպատակով ուսուցիչը նախընտրում է կիրառել փոքր համա•ործակցային խմբերով աշխատանքի ձևը: «Հնչյունափոխություն» թեմայի դասավանդման ժամանակ ուսուցիչը դասարանը բաժանում է երեք խմբի: Յուրաքանչյուր խմբի հանձնարարվում է ուսումնասիրել դասանյութի համապատասխան հատվածը պատմական հնչյունափոխության էության բացահայտումը, դրա առկայությունը ձայնավորների, բաղաձայնների և բարբառների, եռաբարբառների դեպքում:

Յուրաքանչյուր խումբ կարդում և սովորում է իր հատվածը: Ընտրվում է աշակերտը, ով ներկայացնելու է ուսումնասիրված թեմայի վերաբերյալ զեկույցը: Խմբի բոլոր անդամները պատասխանատվություն են կրում ընտրված անձի բանավոր պատասխանի համար և անհրաժեշտության դեպքում կարող են կատարել լրացումներ: Բոլոր խմբերը ավարտում են իրենց հատվածները ներկայացնելը և ուսուցիչը հարցերի միջոցով խմբային հետազոտական աշխատանքի արդյունքները:

Ուսուցչի գործողությունները ուղղորդել յուրաքանչյուր խմբին, տալ համապատասխան հուշումներ, լսել յուրաքանչյուր խմբի եզրահանգումները իրենց թեմայի վերաբերյալ և ամփոփել դասը:

Աշակերտի գործողությունները բարձրաձայն ընթերցանություն, համատեղ հետազոտական և ստեղծագործական աշխատանք, կապակցված խոսքի կազմում, միասին զրույցներ, բանավեճեր, քննարկումներ, թեմայի ներկայացում:

Եզրակացություն

Այսպիսով, ուսումնասիրության ընթացքում պարզ դարձավ, որ «հնչյունափոխություն» թեմայի, ինչպես նաև հայոց լեզվի դասավանդման անհրաժեշտությունը դպրոցներում ոչ միայն աշակերտներին դարձնում է բանիմաց և •րա•ետ, այլև ազդում է անհատի բարոյական կերպարի և արժեքային համակար•ի վրա:

«Հնչյունափոխություն» թեմայի դասավանդման ընթացքում խմբային հետազոտական աշխատանքները իրականացվում են ուսուցիչ-աշակերտ սերտ համագործակցության ձևով: Այդ համագործակցության մեջ ուսուցիչը առավել պետք է նպատակաուղղված լինի դասաժամը անցկացնել խմբային հետազոտական աշխատանքների միջոցով:

Խմբային հետազոտական աշխատանքները իրականացվում են տեղեկատվության փնտրման, հիմնահարցի լուծման ուղիների որոնման, գտնված արդյունքի ամփոփման, ելույթի նախապատրաստման և խմբակային քննարկման հերթական քայլերի կատարմամբ:

Աշխատանքի կատարման ընթացքում վերլուծեցինք դասաժամի օրինակ: Դասի սկզբում ուսուցիչը դասարանը բաժանեց երեք խմբի և տվեց «հնչյունափոխություն» թեմայի համապատասխան հանձնարարություններ: Այս դասաժամի ուսումնասիրմամբ պարզ դարձավ, որ խմբակային հետազոտությունը սկսվում է խմբի կազմամբ: Այնուհետև սկսվում է թեմայի մեր օրինակում «Պատմական հնչյունափոխություն» ուսումնասիրությունը յուրաքանչյուր աշակերտի կողմից: Խմբի ներսում սկսում են քննարկումներ և ընտրվում է վերջնական ասելիքը ներկայացնող աշակերտը:

Ուսուցիչը լսում է բոլոր ելույթները և ավելացումներ, ճշգրտումներ անելուց հետո ներկայացնում է «Պատմական հնչյունափոխությունե դասաժամի ամփոփումը: Դասաժամը համարվեց կայացած, իսկ խնդիրը լուծված: Ուսուցիչը իրացրեց իր գործունեությունը դասաժամի ողջ ընթացքի կազմակերպումը, վարումը, իսկ աշակերտները ցուցադրեցին իրենց ունակությունները, նախորդ դասաժամերի արդյունքները:

Օգտագործված գրականության ցանկ

1. *Եզեկյան Լ. «Հայոց լեզուե, Եր., ԵՊՀ, 2007*

2. *Олешков М. Ю. “Современное образование технологии”, Учебное пособие, Нижний Тагил, НТГСПА, 2011*

3. *Литневская Е.И., Багранцева В.А. “Методика преподования русского языка в школе”, М., 2006*

4. *Արշակյան Ա., Տողանյան Ն., Վիրաբյան Ն. ‘Թեթև մտավոր հետամնացություն ունեցող սովորողների ուսուցման մեթոդական ուղեցույց,’ Երևան, 2010*

5. *Հանրակրթության կազմակերպման հիմնահարցեր, Մաս 1*

6. *Հայոց լեզվի և •րականության առարկայական չափորոշիչ, հավելված 1, 23.11.2007*